ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Հազոպ Փիլավջյանին, Մարդիրոս Բոզյակալյանին, Վահե Տաղլյանին, Նժդեհ Ճապաղջուրեանին, Կարուշ-Կարո Ղազելյանին, Մոսիս Քուշքարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.02.2017թ. հ.10022017-01-0176 վկայական), տարածագնահատման 4-րդ գոտում, Արաբկիր 27-րդ փողոցի հ.6/2 հասցեում գտնվող 604.8քմ մակերեսով հողամասից 180.78քմ /151.82քմ+28.96քմ/ մակերեսներով հատվածները հարակից տարածքում, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող տարածագնահատման 4-րդ գոտում գտնվող 150.67քմ և 30.11քմ /ընդհանուր 180.78քմ/ մակերեսներով համարժեք հողամասերի հետ փոխանակելուն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Արաբկիր 27-րդ փողոցի հ.6/2 հասցեում գտնվող Հագոպ Փիլավջյանին, Մարդիրոս Բոզյակալյանին, Վահե Տաղլյանին, Նժդեհ Ճապաղջուրեանին, Կարուշ-Կարո Ղազելյանին, Մոսիս Քուշքարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 604.8քմ մակերեսով հողամասից 180.78քմ /151.82քմ+28.96քմ/ մակերեսներով հատվածները փոխանակել հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 150.67քմ և 30.11քմ /ընդհանուր 180.78քմ/ մակերեսներով համարժեք հողամասերի հետ:

Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասին անմիջապես կից առկա է համայնքային սեփականություն հանդիսացող չծանրաբեռնված հողամաս: Սեփական հողամասի մի հատվածը այդ հողամասի հետ նույն մակերեսի չափով փոխանակելու արդյունքում կձևավորվի նոր ուրվագծով գույքային միավոր, ինչը հնարավորություն կտա տարածքում ապահովել առավել մեծ մակերեսով ընդհանուր օգտագործման գոտի և ստեղծել քաղաքաշինական առումով կանոնակարգված իրավիճակ:

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 4-րդ գոտում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ